ՖՐԻԿ ԽԱՏԱՄԻ-ՏԻՐԳՈՐԴԻ

ԻՐԱՆ-ԻՐԱՔՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՄՆ-Ը 1980-1988 ԹԹ.

Իրան-իրաքյան պատերազմը, որը տևեց ութ տարի և ծանր հետևանքներ ունեցավ երկու երկրների համար, բավականին կարևոր տեղ է գրավում միջազգային հարաբերությունների պատմության մեջ, հատկապես երբ այն դիտարկում ենք ԱՄՆ-ի մերձավոր և միջինարևելյան քաղաքականության տեսանկյունից: Այս պատերազմի ընթացքում ԱՄՆ-ը Իրանի և Իրաքի հանդեպ որդեգրել էր մի քաղաքականություն, որը կարելի բնութագրել որպես «Երկակի զսպման դոկտրինա»: Չնայած այս երկրների հանդեպ վերոհիշյալ դոկտրինան պաշտոնապես հռչակվեց 1993 թ. նախագահ Բ. Քլինթոնի կողմից, սակայն դրա կիրառումը սկսվել էր դեռևս 1980 թ.-ից, որն այն ժամանակ որակվում էր որպես «ուժերի բալանս»: Այս դոկտրինայի էությունն այն էր նրանում, որ ԱՄՆ-ը պետք է համակողմանիորեն զսպի երկու երկրներին էլ, որպեսզի նրանցից որևէ մեկը պատերազմում առավելության չհասնի մյուսի հանդեպ: Իրան-իրաքյան պատերազմի բռնկումը որոշակիորեն կապված էր Իրանում Իսլամական հեղափոխության հաղթանակի հետ:Իրաքի և Իրանի միջև լարված հարաբերությունները առկա էին մինչ Իսլամական հեղափոխությունը, որոնք հիմնականում կրում էին տարածքային վեճի բնույթ:Հեղափոխությունից հետո այդ և մյուս հակասությունները սրվեցին և պատերազմի վերածվեցին:

Սկզբում նշենք, որ պատերազմի ընթացքում Միացյալ Նահանգների քաղաքականությունը Իրանի և Իրաքի հանդեպ բազմակողմ էր՝ տնտեսական, դիվանագիտական և ռազմական: Սույն հոդվածում կենտրոնանալու ենք հատկապես ռազմական կողմի վրա:

Իրաքի և Իրանի միջև պատերազմի բռնկման գործում զգալի դերակատարություն ունեցավ ԱՄՆ-ը:1980 թ. ԿՀՎ-ն անմիջական մասնակցություն ունեցավ Իրան-Իրաք առանց այդ էլ խիստ լարված հարաբերությունները սրելու և պատերազմի համար հող նախապատրաստելու գործում: Սխալ կլիներ պատերազմի հրահրման ամբողջ մեղքը բարդել ԱՄՆ-ի վրա, քանզի արդեն իսկ 1979-80 թթ. Իրաք-իրանյան հարաբերությունները հասել էին

լարվածության գագաթնակետին: Զ.Քարթերի վարչակազմը ռեգիոնալ որոշակի շահերից ելնելով նպաստեց Իրան-իրաքյան պատերազմի բռնկմանը: Այս նպատակով Զ. Քարթերի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Զ. Բժեզինսկին 1980 թ. մայիսի սկզբներին և հունիսի 17-ին ճանաչողական այցերով ժամանեց Բաղդադ և հանդիպեց Իրաքի բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Նրա այցերի նպատակը երկրի ընդհանուր ռազմաքաղաքական իրավիճակին, ռազմական պոտենցյալին ծանոթանալն էր: Այցերից հետո Բժեզինսկին ամերիկյան հեռուստաընկերություններից մեկին տված հարցազրույցում ասաց, որ ԱՄՆ-ի և Իրաքի միջև լուրջ հակասություններ չկան և ինքը վստահ է, որ Իրաքը մտադիր է սառեցնել իր հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ և դառնալ Պարսից ծոցի անվտանգությունը և կայունությունը ապահովող երկիր և իրենք որևէ խոչընդոտ չեն տեսնում ԱՄՆ-Իրաք հարաբերությունների բարելավման և սերտացման մեջ[1]: Նա համոզվել էր,որ Իրաքի ռազմական պոտենցյալը միանգամայն բավական է Իրանի դեմ հաղթական պատերազմ վարելու համար, այն դեպքում երբ իրանական երբեմնի հզոր բանակը հեղափոխությունից հետո թուլացել և մասնատվել էր[2]: 1980թ. հունիսի վերջերին Բժեզինսկին այցելեց Հորդանան և այդ ընթացքում Հորդանանի և Իրաքի սահմանագլխին հանդիպեց Սադդամի անձնական ներկայացուցչի հետ և նրան հավաստիացրեց, որ ԱՄՆ-ը պաշտպանում է Իրաքի դիրքորոշումը Իրանի հետ սահմանային վեճում, ինչպես նաև կողմ է Իրանից Խուզիստանի անջատմանը և այնտեղի արաբների ինքնորոշմանը[3]: Բժեզինսկու այցերից հետո հիմնվելով նրա տեղեկությունների վրա՝ Սպիտակ Տունը գործնական քայլերի անցավ, ԿՀՎ-ն գործի դրեց իր ողջ հնարավորությունները կրակի վրա յուղ ցնելու համար: Իրանի վրա հարձակվելու համար Սադդամին հորդորում էին նաև ԱՄՆ-ի դաշնակից Պարսից ծոցի

---

[1] Տես՝ Սալամի Հ., էլալ բե վոջուդ ավարանդե-ե ջանգ-ե Արաղ ալայե-ե Իրան,- էնդելաբ-ե էսլամի, ջանգ-ե թահմիլի վա նեզամ-ե բեյնալմելալ, Թեհրան 1997, ս. 49-50. /պարսկ./

[2] Սինչ հեղափոխությունը Իրանը համարվում էր ԱՄՆ-ի ամենասերտ դաշնակիցը Մեր ձավոր Արևելքում Իսրայելից հետո: Իրանի դերը կարևորվում էր հատկապես նավթով հարուստ Պարսից ծոցի անվտանգության ապահովման հարցում:Այդ իսկ պատճառով 1970-ական թթ. ԱՄՆ-ի ռազմական և ֆինանսական օգնությունները Իրանին զգալիորեն մեծացան, որի շնորհիվ իրանական բանակը դարձավ տարածաշրջանի ամենահզոր և ամենամարտունակ զինուժը Իսրայելից հետո: Այն կոչված էր ապահովելու ոչ միայն իր, այլև Պարսից ծոցի արաբական միապետությունների նավթային պաշարնե- րի անվտանգությունը:

[3] Դորուդյան Մ.,Ռավանդ-ե ազադսազի-ե մանաթեղ-ե էշղալի վա զարուրաթ-ե թաղադոմ-ե ջանգ փաս ազ ֆատհ-ե Խոռռամշարհ,- էնդելաբ-ե էսլամի, ջանգ-ե թահմիլի վա նեզամ-ե բեյնալմելալ, Թեհրան 1997, ս. 120. /պարսկ./

միապետությունները, իհարկե, Քարթերի հավանությամբ: 1980 թ. օգոստոսի 5-ին Սադդամը պետական այցով ժամանեց Սաուդյան Արաբիա և հանդիպեց արքայազն Ֆահդին, վերջինս խրախուսեց Սադդամի մտադրությունները Իրանի վրա հարձակվելու համար: Միաժամանակ Ֆահդը Սադդամին փոխանցեց Քարթերի նամակը, որտեղ վերջինս ևս հորդորում էր Սադդամին ներխուժելու Իրան[4]: Այս տեղեկությունը հետագայում հաստատեց ԱՄՆ-ի պետքարտուղար Ալեքսանդր Հեյգը: Երբ վերջինս 1981թ. ապրիլի սկզբներին պաշտոնական այցով գտնվում էր Սաուդյան Արաբիայում, Ֆահդի հետ հանդիպման ժամանակ Հեյգին հայտնեց, որ ԱՄՆ-ի նախկին նախագահ Ջ.Քարթերը իր միջոցով կանաչ լույս է տվել Սադդամին հարձակվելու Իրանի վրա[5]: Ահա այս զարգացումների արդյունքում արդեն մեկ տարի տևող սահմանային միջադեպերից հետո Իրաքի ղեկավարությունը 1980թ. սեպտեմբերի 22-ին պատերազմ սկսեց Իրանի դեմ: Հարց է ծագում, ՞ինչ սպասելիքներ ուներ և ՞ինչ նպատակներ էր հետապնդում ԱՄՆ-ը այս պատերազմում.

ա/.ԱՄՆ-ը ձեռնպահ մնալով Իրանի հետ անմիջական ռազմական կոնֆլիկտի մեջ մտնելուց, փորձում էր Սադդամի ձեռքով պատերազմ սկսել Իրանի դեմ, որի նպատակը այնտեղ հաստատված նոր վարչակարգի տապալումն էր: Այս պատերազմում իրաքյան ուժերին,ըստ Վաշինգտոնի սցենարի, պետք է օգնության գային իրանական բանակի այն ստորաբաժանումները, որոնք ընդդիմանում էին նոր իշխանություններին և սրանք միասին պետք է շարժվեին Թեհրանի վրա:

բ/. Իրանի դեմ պատերազմի սկսման դեպքում ԱՄՆ-ը հույս ուներ ճնշում գործադրելով Իրանի վրա՝ նրան ավելի զիջող դարձնել ամերիկյան պատանդներին ազատ արձակելու առնչությամբ տարվող բանակցություններում[6]:

գ/. ԱՄՆ-ի ղեկավարությունը հույս ուներ, որ պատերազմի արդյունքում

---

[4] Perry R.,October Surprise-Saddam's Green Light,1996, p.1, in:Consortium for Independent Journalism, available through:www.consortiumnews.com

[5] Department of State Cable from A. M. Haig Jr. To the President R. Reagan, Haig's Top Secret "Talking Points" on 1981 Trip to Mideast, April 1981, p. 2, in:Consortium for Independent Journalism, available through:www.consortiumnews.com

[6] Այստեղ առկա էր մեկ այլ գործոն ևս:ԱՄՆ-ի դեսպանատունը գրաված իսլամիստները առաջ էին քաշում այնպիսի պահանջներ,որոնք կհակասեին Իրանում ԱՄՆ-ի ֆինանսական շահերին: Մյուս կողմից պատերազմը կարագացներ ճգնաժամի հանգուցալուծումը և կմեղմացներ Իրանի պահանջները ԱՄՆ-ից:Պատերազմը նաև կստիպեր Իրանին չխարխլել ԱՄՆ-ի՝ Իրանում ներդրած կապիտալի հիմքերը, ինչպես նաև հնարավոր էր, որ ամերիկյան ֆիրմաներին վերադարձվեր Իրենց ազգայնացված սեփականությունը Իրանում: Այս հարցում անձամբ շահագրգռված էր Ջ.Քարթերը, քանզի նրանց ընտանիքի որոշ անդամներ, հատկապես նախագահի եղբայրը, գործարար կապեր ունեին Իրանի խոշոր օլիգարխների, հատկապես շահական ընտանիքի անդամների հետ:

կկարողանա վերականգնել իր ազդեցությունը Իրանում, քանզի վերջինս տնտեսապես ավելի թուլանալով կփորձեր վերականգնել իր նախկին տնտեսական կապերն ԱՄՆ-ի հետ, միաժամանակ պատերազմը վերջինիս հնարավորություն կտար Իրանը նորից դարձնելու զենքի շուկա, քանզի երկիրը պատերազմում այդ զենքի սուղ կարիքն ուներ, հատկապես Մոհամմադ Ռեզա Շահի օրոք գնված ամերիկյան կործանիչների որոշ պահեստամասերը:

դ/. Պատերազմի հարցում ամերիկյան շահագրգռվածության վարագույրի հետևում կանգնած էր նաև Իսրայելի անվտանգության գործոնը: Իրաքը շարունակում էր մնալ որպես հակաիսրայելական պետություն և, բնականաբար Իսրայելի անվտանգությունը ավելի մեծ սպառնալիքի տակ էր դրվում, երբ հանձինս Իրանի հանդես էր գալիս ևս մեկ հզոր հակաիսրայելական ուժ, ուստի Իսրայելի անվտանգության շահերից ելնելով ԱՄՆ-ի համար ավելի նպատակահարմար էր օգտագործել Իրաք-իրանյան հարաբերություններում առկա ծայրաստիճան լարվածությունը և արագացնել նրանց միջև պատերազմի բռնկումը՝ նրանց մի կողմից Իսրայելից հեռու պահելու, մյուս կողմից երկուսին էլ, որպես վտանգավոր օջախ, հավասարապես թուլացնելու համար:

ե/. Պատերազմի հարցում ԱՄՆ-ի շահագրգռվածություններից մեկն էլ Քեմփ-Դեյվիդի եգիպտա-իսրայելական խաղաղության պայմանագրի նկատմամբ արաբական աշխարհում ձևավորված հակակրանքի մեղմումն էր և արաբական երկրներին մեկ միասնական հակաիրանական ճամբարի մեջ միավորված տեսնելու տենչը, որը հիմնականում նպատակ ուներ արաբական երկրների ուշադրությունը շեղել Իսրայելա-արաբական կոնֆլիկտից և այն տեղափոխել մեկ այլ հարթություն՝ Իրան-արաբական աշխարհ հակասությունների ոլորտ: Ահա սա էր, որ հետագայում Իսրայելին հնարավորություն տվեց շատ հանգիստ օգտվել Իրան-իրաքյան պատերազմից և անարգել ներխուժել Հարավային Լիբանան:

ԱՄՆ-ը գրեթե հասավ վերոհիշյալ նպատակներին: Պատերազմի բռնկման հաջորդ օրն իսկ ԱՄՆ-ը հայտարարեց,որ ինքը պահպանելու է այսպես կոչված «ակտիվ չեզոքություն»: Սակայն իրականում պատերազմի հենց սկզբից Վաշինգտոնը լծվեց Իրանին և Իրաքին հավասարապես զինելու և տարբեր տիպի օգնություններ հատկացնելու գործին: Բացի դրանից, ԱՄՆ-ը ռազմական գործողությունների ելքի վրա ազդելու տեսանկյունից ուներ նաև որոշակի լծակներ Իրանում և Իրաքում: Նախ նշենք, թե ազդեցության ինչպիսի լծակներ ունեին Իրանը և Իրաքը միմյանց տարածքներում:Իրաքում Իրանի ազդեցության գլխավոր լծակները երկուսն էին՝ առաջինը դա երկրի հարավում ապրող մեծաքանակ շիադավան բնակչությունն էր, իսկ երկրորդը՝

Հյուսիսային Իրաքում ապրող քրդերն էին, որոնք պատերազմի ընթացքում որդեգրել էին իրանամետ կեցվածք՝Իրանի հետ կազմելով այսպես կոչված «ազատ դաշինք»: Իրաքի ազդեցության լծակներն Իրանում մի քանիսն էին: Առաջինը դա Իրանում ապրող ազգային փոքրամասնություններն էին, որոնց թվում Իրաքը գլխավորապես հենվում էր Խուզիստանում ապրող արաբների և Սիսթան-Բելուչիստանում ապրող բելուչների վրա, որոնց մեծամասամբ օգնում էին Իրաքին դաշնակից Պարսից ծոցի միապետությունները: Իսկ Խուզիստանի /որին Սադդամը անվանում էր Արաբիստան/, արաբներինաջակցում էր հենց Իրաքը: Երկրորդ կարևոր լծակը Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո Իրաքում ապաստանած Իրանական ընդդիմության մի որոշ մասն էր՝ նախկին շահին հավատարիմ գործիչները և Իրանի նոր իշխանություններին պատերազմ հայտարարած «Իրանական ժողովրդի մոջահեդների /մարտիկների/ կազմակերպություն» պարտիզանական խմբավորումը, որի զինված ստորաբաժանումները պատերազմի ընթացքում կռվում էին Սադդամի զորքերի կազմում Իրանի դեմ: Ահա և Միացյալ Մահանգները ելնելով պատերազմական գործողությունների ընթացքից և հավատարիմ մնալով «Երկակի զսպման» դոկտրինային, կարող էր օգտագործել Իրանի լծակները Իրաքում և հակառակը: Օրինակ՝ եթե Սադդամի բանակը 1982 թ. ետ չշպրտվեր Իրանի տարածքից և շարունակեր խորանալ երկրի մեջ, ապա ԱՄՆ-ը չցանկանալով Իրանի պարտությունը, կսկսեր անջատողական շարժումներ հրահրել Իրաքի շիաների և քրդերի շրջանում, իսկ եթե լիներ հակառակը,ապա ԱՄՆ-ը կսկսեր մեծացնել Իրանի հակակառավարական ընդդիմությանը /մասնավորապես մոջահեդներին/հատկացվող ֆինանսավորումը, անջատողական շարժումներ կիրահրեր Իրանի էթնիկ ծայրամասերում, ինչպես նաև թույլ կտար Սադդամին հանգիստ հաշվեհարդար տեսնել Իրանի հետ դաշնակցող քրդերի հետ: Այստեղ ամենայն հավանականությամբ ԱՄՆ-ը կօգտագործեր Թուրքիային և այդպես էլ եղավ: 1983 թ. դրությամբ, երբ իրանական զորքերը հարձակման էին անցել, թուրքական բանակը ԱՄՆ-ի հորդորներով և Սադդամի ցանկությամբ ներխուժեց Հյուսիսային Իրաք,փորձելով քրդերին ետ պահել ռազմական գործողություններից: Իրանին և Իրաքին ամերիկյան զենք ու զինամթերք մատակարարելու հարցում մեծ էր Իսրայելի դերակատարությունը: Վերջինս ԱՄՆ-ի հավանությամբ Թուրքիան օգտագործելով որպես տարանցիկ երկիր՝ զենք և առաջին անհրաժեշտության ապրանքներ էր տրամադրում թե Իրանին և թե, Իրաքին:

Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանատան գաղտնի զեկույցներից մեկում ասվում է. «Մերսինի և Իսկենդերունի նավահանգիստները օրեցօր ավելի շատ

ապրանքներ են ընդունում՝ Իսրայելից Իրաք ուղարկելու համար, միաժամանակ իսրայելական նավերը բեռնաթափում են ապրանքներ, որոնք պետք է ուղարկվեն Իրան, այս բեռները առայժմ զենքեր չեն պարունակում»: Այս զեկույցի մեկ այլ մասում ասվում է.« Մերսինի նավահանգստում իսրայելական նավերը, որոնք բեռնված են 17 հազար տոննա քիմիական նյութերով, արդեն մեկ ամիս է, ինչ սպասում են Սպիտակ Տան թույլատվությանը՝ այդ նյութերը բեռնաթափելու և Իրան ուղարկելու համար»[7]:

1980-1990 թթ. Ամերիկա-Իրաքյան հարաբերությունները 1990-ական թթ. երկրորդ կեսերին սկսեցին որակվել որպես «Իրաքգեյթ», որը վերաբերում էր այդ հարաբերությունների պաշտոնական և ոչ պաշտոնական կողմերին: Արդեն 1982 թ. փետրվարին նախագահ Ռ. Ռեյգանը ի հեռուկս Կոնգրեսի, Իրաքը հանեց միջազգային ահաբեկչությանը սատարող երկրների ցանկից:Այս մասին ասվում էր Պետդեպարտամենտի՝ ԱՄՆ-ի դեսպանատներին հղած հայտարարության մեջ[8]: Եվ ահա 1982թ. երկրորդ կեսին Գյուղատնտեսության Դեպարտամենտը Իրաքին տրամադրեց քաղաքացիական ուղղաթիռներ և ինքնաթիռներ գյուքատնտեսական նպատակներով, այդպիսի խնդրանքով հանդես էր եկել Իրաքի գյուղատնտեսության նախարարությունը, որին և աջակցել էր ԱՄՆ-ը[9]: ԿՀՎ-ի որոշ պաշտոնաթող սպաների վկայությամբ պատերազմի ընթացքում այդ գերատեսչության մոտ 60 աշխատակիցներ գաղտնի տեղեկություններ են հաղորդել Իրաքի հրամանատարությանը իրանական զորքի դասավորվածության և տեղաշարժերի մասին արբանյակային լուսանկարների միջոցով[10]: 1983թ. դեկտեմբերի 20-ին այն ժամանակ Ռեյգանի հատուկ ներկայացուցիչ Դոնալդ Ռամսֆելդը ժամանեց Բաղդադ և հանդիպումներ ունեցավ Ս. Հուսեյնի, փոխվարչապետի և այլոց հետ: Կողմերը քննարկեցին ԱՄՆ-Իրաք հարաբերությունների ապագայի հետ կապված հարցեր, Ռամսֆելդը իր կառավարության անունից աջակցություն հայտնեց Սադդամին Իրանի դեմ

---

[7] US Embassy in Turkey Cable from R.W. Boehm to the Department of State, "Back up to Transshipment Cargos for Iraq",November 21, 1980,pp 1.7, doc 1,in:National Security Archive of George Washington University,Electronic Briefing Book No 82,"Shaking Hands With Saddam Hussein:US Tilts Toward Iraq, 1980-1984" ed. by Battle, J., February 25, 2003, available through www.gwu.edu

[8] See Department of State Cable from Alexander M. Haig Jr. to The United States Interest Section in Iraq, "De-Designation of Iraq As Supporter of International Terrorism", February 27,1982,doc.13,in:ibid.

[9] See United States Interests Section in Iraq Cable From William L. Eagleton Jr. To The De partment of Commerce" Hellicopters and Airplanes for Iraq: Ministry of Agriculture and Agrarian Reform" September 20,1982,doc.15,in:National Security Archive of George Wa shington University

[10] "New York Times",18-08-2002,available through www.globalpolicy.org

մղվող պատերազմում և ասաց. «Իրաքի և ԱՄՆ-ի շահերը համապատասխանում են տարածաշրջանում իրանական և սիրիական էքսպանսիան կանխարգելելու համար»[11]: Երկու երկրների հարաբերությունների զգաքնակետը հանդիսացավ Իրաքի փոխվարչապետ Թարեք Ազիզի պաշտոնական այցը ԱՄՆ, որի արդյունքում 1984թ. նոյեմբերին վերականգնվեցին ԱՄՆ-Իրաք դիվանագիտական հարաբերությունները[12]:

Պատերազմի ընթացքում Իրանի հանդեպ տարվող ամերիկյան քաղաքականությունը ուներ իր առանձնահատկությունները: Նախ եթե ԱՄՆ-Իրաք համագործակցությունը մեծամասամբ բացահայտ էր, ապա Իրանի դեպքում այն հիմնականում քողարկված էր և շփումները առաջին հերթին լինում էին երրորդ երկրի միջոցով, երկրորդ հերթին ԱՄՆ-ը Իրանին զենք մատակարարելով ոչ միայն ուզում էր պահպանել հավասարակշռությունը կողմերի միջև, այլ նաև այնպես անել, որ այդ զենքը հասնի Խոմեյնու ռեժիմից դժգոհ զինվորականներին, այն հաշվարկով, որ վերջիններս երկրում հեղաշրջում կկազմակերպեն. օր.՝ ԱՄՆ-ի Ազգային Անվտանգության խորհրդի դիրեկտիվներից մեկում հստակ գրված է. «Պետք է ամեն տեսակի աջակցություն ցույց տրվի Խոմեյնու ճամբարին ընդդիմացող տարրերին»[13]:

1980-ական թթ. Իրանին զենք մատակարարելու հարցում կարևոր դերակատարություն է ունեցել Իսրայելը: Պաշտոնապես հաստատված է, որ Ռեյգանը սկսել է Իրանին զենք վաճառել 1985 թ.-ից, որը բացահայտվեց 1986թ. և պատմության մեջ մտավ «Իրանգեյթի սկանդալ» անվամբ: Իրականում Ռ.Ռեյգանի վարչակազմը Իրանին սկսել է զենք մատակարարել 1981թ. սկզբից: «Իրանգեյթի» բացահայտման պահին Սպիտակ Տունը ոչնչացրեց այն փաստաթղթերի մեծ մասը, որոնք կապված էին մինչ 1985թ. Իրանին մատակարարված զենքերի հետ: Ա. Սադաթը և Սաուդյան Արաբիայի արքայազն Ֆահդը Ա.Հեյգին ասել էին, որ Եգիպտոսի հատուկ ծառայությունները պարզել են, որ Իրանը Իսրայելից ստանում է ամերիկյան արտադրության

---

[11] United States Embassy in United Kingdom Cable From Charles H. Price II to the de partment of State,''Rumsfeld Mission: December 20 Meeting with Iraqi President Sad dam Hussein''.December 21,1983,p 2,doc.31,in.National Security Archive of George Wa shington University.....

[12] "New York Times", 27-11-1984.

[13] ''US Policy Toward Iran'', The White House, Draft National Security Decision Direc tive /NSDD/, /Secret/,June 17,1985, p.7,doc.5,in:National Security Archive of George Wa shington University,Electronic Briebing Book No.21,''20 Years After Hostages:Declassified Documents on Iran and US '',ed by Byrne M., November 5, 1999, available through: www.gwu.edu

զենքեր[14]: Բնականաբար Իսրայելը դժվար թե այդ քայլին գնար առանց ԱՄՆ-ի կողմից հավանության արժանանալու: Զենքի վաճառքը հիմնականում իրականացվում էր իրանցի մասնավոր միջնորդությամբ: ԽՍՀՄ հետախուզության տվյալների համաձայն 1981 թ. մարտ-ապրիլ ամիսներին Իսրայելը Իրանին է վաճառել հիմնականում «F-14» տիպի կործանիչների պահեստամասեր[15]: Ըստ «Նյու Յորք Թայմս» թերթի տվյալների մինչև 1983 թ. Իրանը մոտ 2,8 մլրդ. դոլլ. զենք է գնել 9 երկրից, այդ թվում և ԱՄՆ-ից[16]: 1983թ. դրությամբ Իրանը Իսրայելի միջոցով ԱՄՆ-ից գնել է 135 մլն. դոլլ. արժողությամբ «երկիր-երկիր» տիպի «LANCE» /լանս/ դասի հրթիռներ և դրանք օգտագործելու սարքավորումներ: Իսկ նույն թվի հուլիսին զենքի արտադրությամբ զբաղվող ամերիկյան «Lockheed» ֆիրմայի մի խումբ մասնագետներ գաղտնի ժամանեցին Իրան՝ երկրի ռազմաօդային ուժերը տեխնիկապես արդիականացնելու համար[17]:

Իրանին զենք վաճառելու գործարքը բացահայտվեց 1986 թ. նոյեմբերին «Իրանգեյթի սկանդալով»: Հետաքննությունը պարզեց, որ զենքի վաճառքը նպատակաուղղված էր ազատել 1984 թ.-ից «Հեզբօլլահ»-ի կողմից գերի վերցված արևմտյան պատանդներին, իսկ վաճառքից ստացված գումարը ուղարկվում էր Նիկարագուայի ապստամբներին: Հետագա ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ 1985-86 թթ. Իսրայելը ԱՄՆ-ի հավանությամբ Իրանին է վաճառել 2000 հատ «TOW» տեսակի հակատանկային հրթիռ, 18 հատ «HAWK» տիպի հրթիռներ և այդ հրթիռների հավելյալ պահեստամասերի 240 կոմպլեկտ[18]: Ընդհանուր հաշվարկից ակներև դարձավ վիճակագրական այսպիսի արդյունք. Իրանը պատերազմի ընթացքում արտերկրից գնել է մոտ 82 մլրդ. դոլ. արժողությամբ զենք ու զինամթերք[19]: Այս ամենից հետո հարց է ծագում, ի՞նչ արդյունքների հանգեցրեց ԱՄՆ-ի քաղաքականությունը Իրանի և Իրաքի հանդեպ 1980-1988 թթ.

---

[14] US. Department of State Cable from A.M. Haig Jr. to the President R. Reagan, Haig's Top Secret "Talking Points" on 1981 Trip to Mideast, April 1981,p.2, in:Consortium for Independent Journalism, available through:www.consortiumnews.com

[15] Perry R.,October Surprise:Russia's Report,part 1,1995, p.3,in:Consortium For Independendent Journalism, available through:www.consortiumnews.com

[16] Creating A Task Forse To Investigate Certain Allegations Conserning The Holding Of Americans As Hostages By Iran In 1980./House of Representatives-February 05,1992/. Congressional Record,p. H 355, available thruogh www.fas.org

[17] Perry R.,op. cit.,p. 3

[18] See Final Report of the Independent Council for Iran/Contra Matters,Investigations and Prosecutions, by L.E. Walsh, vol.1, part 1, Washington D.C., August 4, 1993, pp. 13-29, available through:www.fas.org

[19] Creating A Task Forse To Investigate Certain Allegations.....p. H359

ա/.Այն հանգեցրեց տարածաշրջանում սպառազինությունների նոր թափին: Միացյալ Նահանգների անմիջական հավանությամբ վերջինիս տարածաշրջանային դաշնակիցները մեծ չափով զինեցին Մերձավոր Արևելքի երկու տերություններին՝Իրանին և Իրաքին, որը ավելի մեծացրեց լարվածությունը նրանց միջև պատերազմից հետո:Հրադադարից հետո այս երկու երկրների միջև փոքրամասշտաբ զինված բախումները շարունակվեցին:

բ/. Պատերազմի հանդեպ ԱՄՆ-ի քաղաքականությունը բերեց նրան, որ Մերձավոր Արևելքի իր դաշնակիցները, սեփական անվտանգությունը ապահովելու անհանգստությամբ, մեծացրեցին իրենց ռազմական կախվածությունը ԱՄՆ-ից: Այս հարցում բավական տպավորիչ էին Պարսից ծոցի արաբական միապետությունները, որոնք թե Իրանին և թե Իրաքին դիտում էին որպես սպառնալիք իրենց երկրների ներքին կայունությանը և անվտանգությանը: Օրինակ՝ Սաուդյան Արաբիան մի քանի անգամ մեծացրեց իր անվտանգության համար նախատեսված գումարները, որոնք ծախսվում էին ԱՄՆ-ից մեծ չափով ամենաարդիական զենք և զինամթերք գնելու համար:

գ/.Պատերազմը Սադդամին ավելի սանձարձակ դարձրեց իր հարևանների հետ հարաբերություններում, մասնավորապես 1988 թ.-ից հետո: Այստեղ մեծ է ԱՄՆ-ի քաղաքականության ազդեցությունը պատերազ մի ընթացքում: Այդ քաղաքականությունն էր, որ հանգեցրեց Սադդամի ագրեսիվության աճին: 1980-1988 թթ. ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում Իրաքին անվերապահ պաշտպանելը, անուղղակի կերպով զինելը /այդ թվում քիմիական զենքերով/ հանգեցրին նրան, որ Սադդամը անարգել ներխուժի Քուվեյթ, այսինքն ԱՄՆ-ի կողմից Սադդամի նկատմամբ ցուցաբերվող անպատժելիությունը հանգեցրեց Քուվեյթի իրաքյան օկուպացիային:Ավելին, Քուվեյթ ներխուժելուց մոտ մեկ շաբաթ առաջ Սադդամը հանդիպել էր Իրաքում ԱՄՆ-ի դեսպան Ա.Գիլլեսպիին, որը նշել էր, որ նախագահ Ջ.Բուշը իմաստուն մարդ է և չի պատրաստվում տնտեսական պատերազմ հայտարարել Իրաքին[20]: Սա Սադդամը ընկալեց, որպես ԱՄՆ-ի կողմից վառված կանաչ լույս անարգել Քուվեյթ ներխուժելու համար, ինչպես 1980 թ. Իրանի դեպքում եղավ: Քուվեյթի հարցում Սադդամ Հուսեյնը, որը 1980-1988 թթ. ընթացքում մանևրում էր ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև չգիտակցեց, որ ԽՍՀՄ-ը կործանվում է և Քուվեյթ ներխուժելու դեպքում այն այլևս չի պաշտպանի Իրաքին: Սադդամը կարծում էր, որ այս արկածախնդրությունը ևս անպատիժ կմնա, ինչ տաս տարի առաջ Իրանի դեպքում եղավ:

---

[20] "Washington Post",30-12-2002,available through:www.globalpolicy.org